

ՀՀ ֆինանսների նախարարություն
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 2/7

4 հունիսի 2014 թ.

Քննարկվեց «Դիֆանս Հաուզինգ Ինվեստ» ՓԲԸ 29.04.2014 թ-ի թիվ 01-10 գրությամբ բերված պահանջը 2014 թ-ի հունվարի 1-ի դրությամբ ընկերությանն ավելացված արժեքի հարկ վճարող համարելու վերաբերյալ:

«Դիֆանս Հաուզինգ Ինվեստ» ՓԲԸ գրությունում բերված փաստարկները.

«Դեֆանս Հաուզինգ Ինվեստ» ՓԲԸ-ն 2013 թ-ին հանդիսացել է կամավորության սկզբունքով ԱԱՀ վճարող: 31.01.2014 թ-ին ընկերությունը ներկայացրել է հայտարարություն՝ ամբողջ 2014 թ-ի համար ԱԱՀ վճարող հաշվառվելու և ԱԱՀ վճարողի հաշվառման համար կիրառելու մասին: Սակայն հարկային մարմնի էլեկտրոնային համակարգի սահմանափակումներով պայմանավորված (30-օրյա ժամկետ)՝ հայտարարությունում որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու սկիզբ նշվել է 02.01.2014 թ-ը:

Այնուհետև, 29.03.2014 թ-ին ներկայացվել է «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված հայտարարություն՝ կամավորությամբ ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ՝ որում ևս որպես սկիզբ մեխանիկորեն նշվել է 02.01.2014 թ-ը (հիմք ընդունելով ԱԱՀ վճարող հաշվառվելու սկիզբը):

Հետագայում, նկատելով մեխանիկական վրիպակը, 22.04.2014 թ-ի թիվ 01-09 գրությամբ ընկերությունը դիմել է տարածքային հարկային տեսչության, որպեսզի հայտարարությունում սխալմամբ նշված «հունվարի 2»-ը համարեն «հունվարի 1»:

Համաձայն տարածքային հարկային տեսչության բանավոր դիրքորոշման, քանի որ «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված հայտարարությունում որպես ԱԱՀ վճարող համարվելու սկիզբ նշվել է 02.01.2014 թ-ը, ուստի տվյալ օրացուցային տարվա սկզբում ընկերությունը մեկ օր չի համարվել ԱԱՀ վճարող (դադարել է համարվել ԱԱՀ վճարող լինելուց), և համաձայն «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածի դրույթների, 01.01.2014 թ-ի դրությամբ առկա ԱԱՀ-ի դեբետային մնացորդը (ավելի քան 30 մլն ՀՀ դրամ) ենթակա չէ ընկերության այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և պետք է վերագրվի արտադրության և շրջանառության ծախսերին:

Հաշվի առնելով ընկերության իրական նպատակը, այն է՝ լինել ԱԱՀ վճարող ամբողջ 2014 թ-ի ընթացքում, որի հետ կապված ըստ էության պահպանվել են օրենսդրության ընթացակարգային պահանջները (ներկայացվել են համապատասխան հայտարարությունները), և պարզապես տեղի է ունեցել ամսաթվի հետ կապված մեխանիկական անճշտություն, ուստի, առաջնորդվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով, ընկերությունը խնդրում է հաշվի առնել վերոնշյալ հանգամանքները և ԱԱՀ վճարող ճանաչել 01.01.2014 թ-ից:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում արձանագրվեց այն փաստը, որ «Դեֆանս Հաուզինգ Ինվեստ» ՓԲԸ, ղեկավարվելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի դրույթներով, 29.03.2014 թ-ին էլեկտրոնային եղանակով ՀՀ ԿԱ ՊԵԿ է ներկայացրել ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն: Սակայն, հայտարարությունում թյուրիմացաբար ԱԱՀ վճարող համարվելու ժամկետը 01.01.2014 թ-ի փոխարեն նշվել է 02.01.2014 թ-ը:

Քննարկվող դեպքում հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն. «Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Հանձնաժողովի համոզմամբ, տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունում ԱԱՀ վճարող համարվելու ժամկետը սխալ է նշվել թյուրիմացության հետևանքով, այն մեխանիկական սխալի արդյունք է, այսինքն՝ թույլ տրված խախտումը կրում է ձևական բնույթ, քանի որ ընկերության վրա դրված պարտականությունները բովանդակային առումով, ըստ էության, կատարված են:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ «Դեֆանս Հաուզինգ Ինվեստ» ՓԲԸ 29.04.2014 թ-ի թիվ 01-10 գրությամբ բերված պահանջը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

«Դեֆանս Հաուզինգ Ինվեստ» ՓԲԸ 29.04.2014 թ-ի թիվ 01-10 գրությամբ բերված պահանջը՝ ընկերությանը 2014 թ-ի հունվարի 1-ի դրությամբ ավելացված արժեքի հարկ վճարող համարելու վերաբերյալ, բավարարել:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ